



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 180 - Ա

18 հուլիսի 2018 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ
ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Ա.Ա.Ա.-ՏՐԱՆՍՍԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հուլիսի 9-ի գրությունը
որոշում եմ՝

1. Դադարեցնել «Ա.Ա.Ա.-ՏՐԱՆՍՍԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատկացված Սևան(Ա/Կ)-Ջովաբեր-Սևան N14, Սևան(Ա/Կ)-Սեմյոնովկա-Սևան N15, Սևան(Ա/Կ)-Գեղամավան-Սևան N16, Սևան(Ա/Կ)-Գազարին-Սևան N17, Սևան(Ա/Կ)-Նորաշեն-Սևան N18, Սևան(Ա/Կ)-Վարսեր-Սևան N19 և Սևան(Ա/Կ)-Գավառ-Սևան N20 ներմարզային երթուղիների սպասարկումը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անուշավան Ղազարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 20-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝



 ՄԱՐԱԹԵԼՅԱՆ